

ՉՆՔՈՒՇԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. ՅՈՒ.

Չնքուշ գյուղաքաղաքը՝ գտնվել է Հայոց Միջագետքի եպիսկոպոսանիստ և մայրաքաղաք Ամիդից հյուսիս-արևմուտք՝ 103 կմ հեռավորության վրա¹: Բնակավայրը հայտնի է Միրահայաց Ս. Աստվածածին վանքով և քաղաքամիջի Ս. Կարապետ եկեղեցով²: Չնքուշի հետ է կապված նաև հարակից Ատիշ (Ադիշ) գյուղը, որի կառույցներից հիշատակվում են Ս. Սարգիս, Ս. Կարապետ ու Ս. Մարութին եկեղեցիները³: 1895 թ. ջարդերի ժամանակ Ատիշն ամբողջությամբ այրվել է (310 տուն), և գյուղը գաղթել է Չնքուշ, իսկ 1915 թ. բնաջնջվել է նաև Չնքուշը (10000 հայ բնակչություն)⁴:

Չնքուշի պատմության մեջ մեծ դերակատարություն է ունեցել հոգևոր կյանքը, որի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել գրչագիր մատյանների հիշատակարաններում: Դրանք այլևայլ դեպքերի հավաստի ծանուցումներով ձեռք են բերել սկզբնաղբյուրի արժեք: Բնակավայրի մասին գրականությունը մեծ չէ, և ուշադրության է արժանի հատկապես «Կոունկ» շաբաթաթերթի (Ֆիլադելֆիա, 1919-1962) խմբագիր Գառնիկ Գևորգյանի «Չնքուշապատում» աշխատությունը, որը ներառում է Չնքուշին վերաբերող բոլոր տեղեկությունները՝ պատմություն, ժողովրդական բանահյուսություն, բառարան, անգամ հատվածներ Մինաս Ամդեցու «Օրագրութիւնից»:

Արդ, հիշատակարանների համադրումով փորձենք ներկայացնել Չնքուշի ձեռագրական ժառանգությունը՝ որպես հոգևոր-մշակութային պատմության կարևոր գործառույթ:

Չնքուշի Միրահայաց Սուրբ Աստվածածին վանքը, ըստ Գարեգին Սրվանձտյանցի «Թորոս Աղբար» աշխատության մեջ տեղ գտած հիշատակարան-պատմության, հիմնադրվել է 1561 թ. մոտա-կա բնակավայր Ջերմուկից փախստական դարձած Պողոս վարդապետի կողմից. «Արդ ի թվ. ամի տեառն 1561, եւ հայոց թվին Ռ. Ժ. ...Յայսմ դառն եւ դժուար ժամանակի, որ էր թվական Ռ. Ժ. ին նախ եւ յառաջ

¹Գևորգեան Գ., Չնքուշապատում (այսուհետև՝ Չնքուշապատում), հ. 1, Երուսաղեմ, 1970, էջ 4-6: Տե՛ս նաև Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 262, Հարությունյան Բ., Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Ե., 2008, էջ 80-81:

²Սրվանձտեանց Գ., Թորոս Աղբար (այսուհետև՝ Թորոս Աղբար), հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 187-190:

³Նույն տեղում, էջ 454, 463, տե՛ս նաև Չնքուշապատում, էջ 21:

⁴Չնքուշապատում, էջ 93-95, 65-66:

Պաւղոս վարդապետ այր հոգեշնորհ, որ էր յերկրէն Հասառնայ, որ է նահանգէն Ջերմուկայ, եւ այժմ ասի Հասառնայ գալայ, ուր էր վանքն երկրին մեր, զոր քակեալ աւերէին ազգն քրդաց. եւ այս լուսահոգի Պաւղոս վարդապետն փախստեայ դիմելով ի մատուոս այս, որ է յանուն Ս. Աստուածածնի, զոր ի վաղուց ժամանակաց կառուցեալ էր նախնեաց սրբոց. եկեալ աստ երջանիկ վարդապետն Պաւղոս ուխտ եւ աթոռ կարգեալ եւ հաստատեալ ի նոյն ժամանակի, ոչ գոյ եղեալ պարիսպ եւ շինութիւն, բայց միայն խուց եւ տնտեսատուն, այսպէս կառավարելով մինչեւ ի թվ. Ռ. Խ. Բ (1593). լինի զրաւ կենաց նորին...»⁵:

Վանքը նշանավորվում է Պողոս վարդապետի հաջող վանահայր Մարտիրոս Չնքուշեցու օրոք (1593-1632), որն ըստ երևույթին, հիմնել է Չնքուշի վարդապետանոցը⁶: Մարտիրոս վարդապետն աշակերտել է նշանավոր վարդապետ և եկեղեցական գործիչ Պետրոս Կարկառեցուն (1552-1608): Ժամանակի պատմիչ Գրիգոր Դարանաղցին արժևորում է հատկապէս Կարկառեցու ուսուցչական վաստակը՝ բազմաթիվ առիթներով հիշատակելով նրա «լսարանն» ու աշակերտներին⁷: Նա Հայոց Միջագետքի եպիսկոպոս Հովհաննէս Շիրակի (1553-1582) աշակերտներից էր և մատենագրության մեջ ընդունված՝ Արևմտյան վարդապետական ճյուղի գլխավոր ներկայացուցիչներից, նույնիսկ պահպանվել են ցանկեր, որտեղ վարդապետների Արևմտյան մի ճյուղը շարունակվում է Կարկառեցու և նրա աշակերտ Մարտիրոսի և Չնքուշի վարդապետների անուններով՝ ներառյալ մինչև Հովհաննէս Բ Չնքուշեցի վանահայրը (1703-1723)⁸: Այս ճյուղավորման փաստագրումն ինքին վկայում է Չնքուշի վարդապետանոցի կշռի մասին, իսկ այդ ցանկում Երուսաղէմի պատրիարք (1666-1668, 1670-1677) և կաթողիկոս (1681-1691) Եղիազար Այնթափցու,

⁵ Տե՛ս Թորոս Աղբար, էջ 457-458 (Միրահայաց Ս. Աստվածածին, թիվ 20 ձեռագրի հիշատակարան): Ջերմուկ բնակավայրը գտնվել է Չնքուշից 29 կմ հեռավորության վրա (Հակոբյան Թ., նշվ. աշխ., հ. 4, էջ 401, տե՛ս նաև Չնքուշապատում, էջ 5): Բանն այն է, որ վանք հիմնելու համար Չնքուշը նպաստավոր վայր էր մի քանի առումներով. նախ, գլխավոր ճանապարհներից հեռու էր գտնվում (Հակոբյան Թ., նշվ. աշխ., հ. 4, էջ 262, Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 80-81:), երկրորդ՝ գրեթե ամբողջությամբ հայատարր էր իրեն հարող Ատիշ գյուղի հետ միասին (Չնքուշապատում, էջ 83-84) և, ինչպէս Գառնիկ Գևորգյանն է փաստարկում, կիսանկախ դրություն է ունեցել մինչև XVII դ. վերջը (Չնքուշապատում, էջ 31-38, Գեորգեան Գ., Հայ Չնքուշը ԺԸ դար (Բազմավեպ, 1964, - 7-9, էջ 218-225), Գեորգեան Գ., ԺԷ դարու Չնքուշի մէկ խորհրդաւոր գաղտնիք (Միտն, 1966, - 10-12, էջ 540-545):

⁶ Հմմտ. Թորոս Աղբար, էջ 458, 484, Ալիսէան Ն., Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 5, 14-17, Մինաս Համրեցու «Վարդապետաց գովասանք» տաղը, որը «կարգ վարդապետացի» չափածո տարբերակ է (Չնքուշապատում, էջ 116-118):

⁷ Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 320-324, 351-353, 363-364, 390-393: Պետրոս Կարկառեցու մասին տե՛ս նաև Սիւրմէան Ա., Հալէպի պատմութիւն, հ. 2, Փարիզ, 1950, էջ 117-129:

⁸ Տե՛ս Թորոս Աղբար, էջ 458, 484, տե՛ս նաև Ալիսէան Ն., նշվ. աշխ., էջ 5, 14-17, Չնքուշապատում, էջ 116-118:

եկեղեցական հայտնի գործիչ, Երուսաղեմի պատրիարք (1697-1704), մատենագիր Մինաս Համդեցու անունները ևս մեկ փաստարկ են ասվածի վերաբերյալ:

Վարդապետանոցի հիմնումը և բարձր կրթություն ապահովելը պայմանավորված էր XVI դ. երկրորդ կեսին սկսված Հայոց Միջագետքի հոգևոր-մշակութային վերընթացով, մասնավորապես՝ Հովհաննես Շիրակի և նրա հետևորդների գործունեությամբ⁹:

Չնքունի վանական կյանքի աշխուժացմանը զուգընթաց սկսում է զարգանալ գրչությունը, որը նշանավորվում է հատկապես XVI դարավերջի գրիչ Գասպարի գործերով:

1. Շարակնոց (անհայտ - Մ. Ա.)-1580 թ.: Տեղը՝ Չնքուն: Գրիչ՝ Գասպար դպ.¹⁰:

Ըստ հիշատակարանի պահպանված մասի՝ «Գրեալ Շենգուժ (Չնքուն) գիւղաքաղաք, ի թվին Ռ. Բ. Թ (1580) ի դառն եւ նեղ ժամանակի... տիրեալ էր աշխարհիս Հայոց սով, սուր, գերութիւն... յիշեցէք Գասպար դպիրս... ժամանակս (գրելոյ) ամառային էր եւ ճանճին չարիքն եւ խայթումաճքն յոլով էր. ո՛հ այս ճանճերու չարիքն»¹¹: Հատվածը քաղված է «Թորոս Աղբար» աշխատասիրությունից, որի հիշատակարանների բաժինը նվիրված է Փորք Հայքի և Մեծ Հայքի հարավային գավառների ձեռագրերին: Ձեռագրերը խմբավորված են ըստ գտնվելու վայրերի, և դրանց նկարագրությունը սահմանափակված է վերնագրի և հիշատակարանից հատվածների մեջբերումով. երբեմն հիշատակարանները կրճատումներով են կամ ոչ ամբողջական¹²: Ձեռագրերի մեծ մասը ոչնչացվել է և անհետացել 1895-1896 թթ. ջարդերի և 1915 թ. ցեղասպանության ընթացքում: Մեջբերված կտորը, բարեբախտաբար, ձեռագրի վերաբերյալ հիմնական տվյալներ է պարունակում: Սրվանձտյանցի ցուցակագրման ժամանակ այն գտնվել է Բարձրահայաց Ս. Աստվածածին վանքում (Դիարբեքի ի նահանգ, Արդնի շրջան) և այս տվյալը կարող է շաղկապվել ստացողի անվան հետ:

2 Շարակնոց (Մ1627)-1586 թ.: Տեղ՝ Չնքուն: Գրիչ՝ Գասպար երեց¹³:

Այս հիշատակարանային տվյալները լրացնում են նախորդին. «Գրեցաւ Երգարանս այս ի գիւղաքաղաքս Շենքուն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին, ի լաւ եւ ընտիր աւրինակէ Խլկցի, ի թվին ՌԼԵ (1586), ձեռամբս

⁹ Հովհաննես Շիրակ (1553-1582), Ղուկաս Կեղեցի (1582-1592), Սրապիոն Ուռհայեցի (1592-1604), Բարսեղ Արծրունի (1604-1639) և այլք: Հայոց Միջագետքի հոգևոր գլխավոր կենտրոնը Ամիդն էր, որից բացի, տարածաշրջանում հայտնի էր Կարկառի դպրոցը՝ Պետրոս Կարկառեցու գլխավորությամբ:

¹⁰ Թորոս աղբար, էջ 384 (Բարձրահայաց Ս. Աստվածածին, թիվ 4):

¹¹ Նույն տեղում:

¹² Աշխատասիրությունը պաշտոնական վիճակագրություն է. այն իրականացրել է Գարեգին Սրվանձտյանցը 1878-1879 թթ. ընթացքում՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի հանձնարարականով:

¹³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, հ. Ե, Ե., 2009, էջ 683-686 (Մ1627):

մեղսամակարդ անձիս եւ սուտանուն՝ Գասբար չերիցուս, որ կամաւ իմով անձն առեալ եւ տարագիր եւ աւժար եւ ընթանալ զհետ կորուսչին՝ զերեալսն ի նմանէ, որ եւ իմ ակնկալութիւն եպերելոյս ի կորուստն է.... Արդ, աղաչեմ զմեզ, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք այսմ Երգարանիս, սղալանաց եւ պակասանաց եւ անարուեստ գրչութեանս եւ գրադարձիս անմեղադիր լերուք...»¹⁴: Սա Չնքուշի քաղաքամեջի Ս. Կարապետ եկեղեցու հնության մասին փաստող առաջին վկայությունն է: Չնայած ստացողի անուն չի նշվում, սակայն մեջբերվածից պարզ է դառնում, որ ձեռագիրն օրինակվել է եկեղեցական կիրառության համար: Այստեղ նաև Գասպար գրչի մասին հետաքրքիր փաստեր կան. ինչպես տեսնում ենք, նա դպիրից երեցի աստիճանի է բարձրացել, նաև պարզվում է, որ Գասպարը տեղաբնիկ չէ:

3. Շարակնոց (Ե1612) -1588թ.: Տեղ՝ Չնքուշ: Գրիչ՝ Գասպար¹⁵: Ստացող՝ Յակոբ երեց և տէր Սահակ:

Ձեռագրի հիշատակարանը ստացողների անունների հավելումով գրեթե նույնությամբ կրկնում է նախորդը:

4. Շարակնոց (MAF56) -1591թ.: Տեղ՝ Չնքուշ: Գրիչ՝ Գասպար: Ստացող՝ Աստվածատուր եպ.¹⁶:

Ձեռագիրն ունի երկու մեծ հիշատակարան՝ գրչի և հետագա ստացողի: Գրչի հիշատակարանը վերնում մեջբերվածը բովանդակելուց բացի (տե՛ս Մ1627), հավելյալ տեղեկություններ է հաղորդում Գասպարի ընտանիքի անդամների վերաբերյալ: Ստացող Աստվածատուր եպիսկոպոսի պաշտոնավարման վայրը նշված չէ: 1591 թ. մոտ ժամանակահատվածում նույնանուն եպիսկոպոսի անունով հայտի են երկու ձեռագիր՝ գրված 1594 թ.: Դրանցում նրա անունը կապվում է Զերմուկի՝ վերը նշված Արղլմսեհ վանքի հետ¹⁷:

Հետագա ստացողի հիշատակարանը կարևոր է թե՛ ձեռագրի ճակատագրի, թե՛ առաջին ստացողի վերաբերյալ տվյալների պակասը լրացնելու համար: Երկրորդ ստացողն է մահտեսի Դավիթ պատանին. «Վերստին ստացող եղեւ.... մահտեսի Դավիթ պատանին....Եւ մանուկս այս՝ է ցեղեալ ի զարմէն խոճայ Ասատիսանենց, որդի մահտեսի Յունանին եւ եղբոր որդի մահտեսի Յովհաննիսին:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 5, Երուսաղեմ, 1971, էջ 410 (Ե1612):

¹⁶ Vardanyan E. Reflections of Armenia Manuscripts and Religious Art, Paris, 1912, pp. 60-63 (MAF56-Musne armennien de France ձեռ. 56): Տե՛ս նաև Միսրմէան Ա., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երոպայի մասնաւոր հաւաքումներու, հ. 1, Փարիզ, 1950, էջ 70-72 (ԵվՄ30):

¹⁷ Տե՛ս Սարգիսեան Բ., Սարգսեան Գ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 106-110 (Վ326), Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, Վիեննա, 1895., էջ 748-750 (Վի314):

Յառաջնորդության Ամիթ մայրաքաղաքիս տեառն Բսահակայ աստուածաբան վարդապետին եւ ի կաթողիկոսութեան սրբոյ Էջմիածնի՝ տեառն Նահապետի ամենայն հայոց Հայրապետի, եւ ի թագաւորութեան Օսմանցոց Սուլթան Մուստաֆայ կոչեցելոյ»¹⁸: Այստեղ որոշ տվյալներ հստակեցման կարիք ունեն: Խոջա Ասատիւանը Երուսաղեմի թիվ 1947 ձեռագրի պատվիրատուն է, որը գրվել է Ամիդում (1660 թ.) և նվիրատրվել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին¹⁹: Այս և Ֆրանսիայի հայկական թանգարանի (MAF 56) ձեռագրերի հիշատակարանային տվյալների համադրումը կասկածի տեղիք չի թողնում, որ Ասատիւանը, հետևաբար և Դավիթը ամդեցիներ են: Ձեռագիրը ստանալու թվականը նույնպես բացակայում է, սակայն Նահապետ կաթողիկոսի (1691-1705), Ամիդի առաջնորդ Բսահակ վարդապետի (1690-1711)²⁰ և օսմանյան սուլթան Մուստաֆա Բ-ի (1694-1703) հիշատակումը թույլ են տալիս նշել ժամանակը. ստանալու տարեթիվը պետք է փնտրել 1694-1703 թթ. միջև ընկած ժամանակահատվածում:

Փաստորեն, ձեռագիրը Աստվածատուր եպիսկոպոսից մոտ մեկ դար անց հայտնվել է Ամիդում: Ենթադրելի է, որ այն հեռու չի տարվել, հետևաբար Աստվածատուրին Ջերմուկի վանքի նույնանուն եպիսկոպոսի հետ կապելը հավանական վարկած է:

Թվարկված շարակնոցներից մեզ հասած երեք օրինակները (I-ը՝ անհայտ) Խլկեցու խմբագրությամբ են, և դրանց արտաքին նկարագրությունը գրեթե նույնն է²¹: Մանրանկարչության տեսանկյունից առանձնահատուկ է Ֆրանսիայի Հայկական թանգարանում պահվող ձեռագիրը (MAF 56)²², որում երևում են Գասպարի նկարչական ձևերն ու հմտությունը:

5. Ավետարան (անհայտ - Մ. Ա.)-Թիվ՝ անհայտ: Տեղ՝ Չնքուշ: Գրիչ՝ Գասպար: Ստացող՝ Միհե տիկին²³:

¹⁸ Vardanyan E., նշվ. աշխ., էջ 60-63, Միսմեան Ա., նշվ. աշխ., էջ 70-72:

¹⁹ Պողոսեան Ն., նշվ. աշխ., հ. 6, Երուսաղեմ, 1972, էջ 503-504 (Ե1947):

²⁰ Բսահակ վարդապետի՝ Ամիդի և Հայոց Միջագետքի առաջնորդ լինելու թվական տվյալները ճշգրտել ենք հիշատակարաններով, որոնց մեջ նա առաջին անգամ որպես Ամիդի և Արդնի առաջնորդ է հիշատակվում 1690-ին, իսկ վերջին անգամ՝ 1711-ին: Այս մասին տե՛ս Ոսկեան Հ., Տիարալեքիի կամ Տիգրանակերտի նահանգին վանքերը (Բազմավեպ, 1961, թիվ 1-6, էջ 51), տե՛ս նաև Tisserant E. Codices armeni Byblos thecae Vaticanae Brgiani Vaticani Berberiani chisiani, Rome, MGMXXVII(1927), pp. 185-192 (BAV Borg. arm. 85/BAV85), Թորոս Աղբար, էջ 411-412:

²¹ Մ1627-թերթ՝ 324: Նիւթ՝ թուղթ: Մեծ.՝ 11,5*8,2: Գր.՝ միասին: Գիր՝ բոլոր-գիր: Տող՝ 21: Կազմ՝ դրոշմագարդ, շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կապոյտ կտաւ: Ե1612-թերթ՝ 332: Նիւթ՝ թուղթ: Մեծ.՝ 13,5*8,5*6: Գր.՝ միասին: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 23: Կազմ՝ կաշեկազմ տախտակեայ դրոշմագարդ: MAF56-թերթ՝ 310: Նիւթ՝ թուղթ: Մեծ.՝ 10*7,5*4: Գր.՝ միասին: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակեայ, շագանակագոյն, լանջքով եւ թիկունքով, կողքին վրայ գոյգ ճարմանդով եւ շղթայակապ:

²² Vardanyan E., նշվ. աշխ., էջ 60-63.

²³ Թորոս Աղբար, էջ 453 (Միսահայաց Մ. Աստվածածին, թիվ 4):

Յուդակագրման ժամանակ ձեռագիրը գտնվել է Սիրահայաց Սուրբ Աստվածածին վանքում: Հիշատակարանային տվյալներն աղճատված են:

6. Գևորգ Սկևռացի, Մեկնութիւն Եսայու մարգարեութեան (Վ1380) -1593թ.: Տեղ՝ Կարկառ: Գրիչ՝ Գասպար²⁴:

Ձեռագրի հիշատակարանը տեղեկություն է հաղորդում Գասպարի՝ Կարկառում հաստատվելու և նրա հեղինակություն վայելելու վերաբերյալ. «Արդ ես նուաստս եւ անպիտանս եւ թշուառացեալս յամենեցունց, եկեալ առ ոտս քաջ րաբունապետի Պետրոսի վարդապետի, հանգչելով ի գոգ նորա եւ սպասաւորելով նմա եւ կերակրելով ի տուէ եւ ի գիշերի զբանն կենաց...մեղաց թողութիւն խնդրել Գասպար զծողիս և սիրելի եղբարց իմոց եւ աշակերտակցացն իմոց...»²⁵: Այն նույնանում է նախորդ ձեռագրերի գրչի հետ ընտանիքի անդամների անուններով, որոնց բոլորին կորցրել է մեկ ամսվա ընթացքում: Տվյալ ձեռագրի հիշատակարանային տվյալները թույլ են տալիս Գասպար գրչի մասին նոր բացահայտումներ անել: Գրիգոր Դարա-նաղցին Պետրոս Կարկառեցու բազմաթիվ աշակերտների մեջ նշում է «Չնքուշեցի Գասպար վարդապետ»²⁶ անվանումը: Հետևաբար, համանուն վարդապետն ու գրիչը նույն անձն են:

7. Բառարան (անհայտ-Մ.Ա.) -1594 թ.: Տեղ՝ Կարկառ: Գրիչ՝ անհայտ: Ստացող՝ Պետրոս վարդապետ (Կարկառեցի-Մ. Ա.)²⁷:

Ձեռագիրը պահվել է Սիրահայաց Սուրբ Աստվածածին վանքում և գրվել է Պետրոս Կարկառեցու անանուն աշակերտների կողմից: Սա ենթադրել է տալիս, որ Գասպարը մասնակցություն ունի ձեռագրի գրչության գործում:

8. Մաշտոց (BL Arm. 2669)-1605: Տեղ՝ Ատիշ: Գրիչ՝ Բարսեղ: Ստացող՝ Յոհան (Հարպաթու գյուղից)²⁸:

Ըստ ստացողի հիշատակարանի՝ «Արդ՝ գրեցաւ...ի թրւականիս Հայոց ՌԾԴ (1605) ամին, ի գեղոս որ այժմ ասի Ատիշ, ընդ հովանեաւ Ս. Կարապետին և Ս. Սարգսին, ի հայրապետության տեառն տէր Գրիգորի [նկատի ունի Գրիգոր ԺԳ կաթ.-ին (1603-1605)՝ Սրապիոն Ուռհայեցուն-Մ.Ա.] և մերոյ առաջնորդի Ս. ուխտիս Աստուածածնին՝ տէր Ղազար արհեպիսկոպոսին... կրկին անգամ յիշեցէք ի Քրիս-

²⁴ Ճեմճեմեան Ս., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. է, Վենետիկ, 1996, էջ 767-770 (Վ1380):

²⁵ Նույն տեղում:

²⁶ Գրիգոր Դարանաղցի, էջ 363:

²⁷ Թորոս Աղբար, էջ 454 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 19):

²⁸ Conybeare F. A catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, pp 70-72 (BL Arm. 2669).

տոս Յոհանն, որ ըստացաւ զՄաշթոցս զայս՝ ի հալալ ընչից իւրոց, եղ յիշատակ Ս. Աստուածածնի միջի վանքն...»²⁹: Այս ձեռագիրը գրվել է Չնքուշին հարող Ատիշում, որտեղ նշված եկեղեցիները առաջին անգամն են հիշատակվում³⁰: Բրիտանական թանգարանի ձեռագրացուցակը կազմող Կոնիքիրը Ղազարին համարում է Ատիշի արքեպիսկոպոս, սակայն, գյուղը պատկանել է Չնքուշի թեմին, բացի այդ, այլ աղբյուրներում Ղազար արքեպիսկոպոսը հիշատակվում է որպես Արդնի առաջնորդ³¹: Նաև «Չնքուշապատման» հեղինակ Գառնիկ Գևորգյանը, ձեռագիրն անձամբ տեսնելով Բրիտանական թանգարանում, նա մեկ կարևոր դիտարկում է արել այդ առիթով՝ նշելով, որ ստացող Հովհաննեսի բնակավայր Հարպաթ գյուղը Արդնում է³²: Հետևաբար, ձեռագիրը նվիրաբերվել է Արդնի Բարձրահայաց Ս. Աստվածածին վանքին:

Այդուհետև, Չնքուշում ձեռագրեր օրինակելու վերաբերյալ տեղեկությունները միայն վկայությունների տեսքով են՝ «Թորոս Աղբարի» նշված հիշատակարան-պատմության մեջ, որտեղ Մարտիրոս Չնքուշեցուն «գոն ծրեալ մատանց նորին յոլով գրեանք ի սուրբ վանքս...» բնութագրումն է տրվում, իսկ Մարկոս Չնքուշեցու (1643-1679) մասին ասվում է. «Գանձատետր մի գրեալ ձեռամբ իւրոյ»³³:

Ձեռագրերի մեծ մասի գրիչ Գասպարի թողած հիշատակարաններն արժեքավոր են թե՛ Չնքուշի պատմության և թե՛ իր կենսագրության համար: Ոչ բոլոր ձեռագրերի հիշատակարաններում է Գասպարը ազգականների անուններ նշել, որի շնորհիվ համանուն գրիչներին նույնացնելը կասկածից դուրս կլիներ: Սակայն Գասպար-Չնքուշ անունների փոխկապակցվածությունը, այլ գրիչների անունների հայտնի չլինելը, նաև թվական տվյալներ նշելն ու հիշատակարանների ոճական նմանությունը թույլ տվեցին վերջինիս վերագրել յոթ ձեռագիր: Տեղեկություններն ավելի հարուստ կլինեին, եթե «Թորոս Աղբար» հիշատակարանների ժողովածուում Գասպարի անունով երեք (որոնցից մեկը՝ կասկածելի) ձեռագրերը պահպանված լինեին:

Գրչության շարունակական չլինելու վերաբերյալ այլ ապացույց են Չնքուշի վարդապետների՝ Ամիդի գրչակենտրոնին արված պատվերները, որոնց հիշատակարան-

²⁹ Նույն տեղում:

³⁰ Հմմտ. Թորոս Աղբար, էջ 454 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 14), էջ 463 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 28):

³¹ Տե՛ս Ալիսեան Ն., Բարսեղ վ. Արծրունի, Եպիսկոպոս Ամիթի եւ վերատեսուչ Մուշի Առաքելոյ վանքի (Հանդես Ամսօրեայ, № 10-12, 1956, էջ 438), տե՛ս նաև Տաշեան Յ., նշվ. աշխ., էջ 799-800 (Վիճ47):

³² Conybeare F., նշվ. աշխ., pp. 70-2 հմմ. Գևորգեան Գ., Ճշտումներ Չնքուշի մասին (Բազմավեպ, 1966, №1-3, էջ 56-60):

³³ Թորոս Աղբար, էջ 458 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 20):

ները լի են կարևոր տեղեկություններով: Ստորև ներկայացնենք այդ ձեռագրերը՝ կարևորելով Ամիդ-Չնքուշ փոխառնչություններն ու պատմական տեղեկությունները:

1. Համառոտ Աստվածաշունչ (անհայտ-Ս. Ա.)³⁴ -1621 թ.: Տեղ՝ անհայտ: Գրիչ՝ անհայտ: Ստացող՝ Մարտիրոս Չնքուշեցի³⁵:

Սիրահայաց Սուրբ Աստվածածնում պահվող այս ձեռագիրը չի պահպանվել, և կրճատ հիշատակարանը Մինաս Համդեցունն է (Չնքուշի առաջնորդ՝ 1679-1703 թթ.), որը ձեռագրի ժառանգորդն է: Այնուամենայնիվ, մեզ հասած տվյալներով, հնարավոր է ենթադրություններ անել գրչության վայրի վերաբերյալ (տե՛ս ստորև):

2. Աստվածաշունչ (անհայտ-Ս. Ա.)-1626 թ.: Տեղ՝ Ամիդ: Գրիչ և ծաղկող՝ Մինաս և նրա աշակերտներ Հովհաննես և Առաքել: Ստացող՝ Մարտիրոս Չնքուշեցի, Հովհաննես Չնքուշեցի (Չնքուշի հետագա առաջնորդ՝ 1632-1643 թթ.)³⁶:

Վերը նշված հավաքածուի այս օրինակը նույնպես չի պահպանվել, այնուամենայնիվ, հիշատակարանում բազմաբնույթ տեղեկություններ են հաղորդվում ձեռագրի գրվելու և տիրող քաղաքական իրավիճակի, ինչպես նաև ստացող վարդապետների վերաբերյալ. «Պատուական ծերունին Տէր Մարտիրոս արքեպիսկոպոսն և ...քաջ փիլիսոփայն Տէր Յովհաննէս վարդապետն ցանկացող և փափաքող եղեն աստուածային մեծ բուրաստանիս...»³⁷:

3. Ավետարան (BAV85)-1637 թ.: Տեղ՝ Ամիդ: Գրիչ, ծաղկող՝ Մինաս: Ստացող՝ Յովհաննես վարդապետ³⁸:

Ձեռագիրն այժմ պահվում է Վատիկանի գրադարանի Բորգյան հավաքածուում: Ծաղկողի, ստացողի և հետագայի ընդարձակ հիշատակարաններում ձեռագրի գրչության, ստացողի, ծաղկողի, Չնքուշի և Ամիդ-Չնքուշ փոխառնչությունների վերաբերյալ բազմաբնույթ տեղեկություններ են պարունակվում: Մենք հաջորդաբար կանդրադառնանք նշված երեք հիշատակարաններին:

³⁴ Նույն տեղում, էջ 463-465 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 31): Սրվանձոյանցը ձեռագիրը խորագրել է «Աւետարան», որը, մեր կարծիքով, սխալ է: Մեր՝ «Համառոտ Աստվածաշունչ» խորագրումը պայմանավորված է հիշատակարանով, ըստ որի, «Տէր Մարտիրոս Շնքուշցին տեսեալ զիմաստաշատ և զդիրագիտ կարգ տոհմից ազգակցութեանց պատմութեանց Հին և Նոր Կտակարանաց Աստուածաշունչ տառից. ետ գրել զսառնակէնկար զարդոյք ի վայելում սրբասէր անձին իւրոյ...» (նույն տեղում): Այն ձևային առումով տարբերվում է մնացած հիշատակարաններից, և, փաստորեն, դրանով էլ հաստուկ է միայն տվյալ նյութին, հմմտ. CBL551 (Չեսթր Բիթի գրադարան), Մ10772, Մ2700, Մ481, Մ2710 ձեռագրերի հիշատակարանները:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 477-479 (Սիրահայաց Ս. Աստվածածին, թիվ 38):

³⁷ Նույն տեղում:

³⁸ Tisserant E., նշվ. աշխ., էջ 185-192 (BAV85):

Ըստ Մինաս ծաղկողի հիշատակարանի՝ «Եղև ինձ մեղապարտ և թարմատար գրչի Մինասի հանդիպիլ յաստուածապահ և իտիրախնամ գիւղաքաղաքն Շենքուշ որ ստուգաբանի Շէն քօշայ որ և այսպէս է. առ սիրելի և բազմագութ երախտաւորն իմ տէր Յոհանէս սրբազան Հայրապետն և աստուածաբան վարդապետն. յորդորեաց զքեռու որդին իւր զԹորոսն (պարոն պատվանունով - Մ. Ա.) և հարկեաց(ի վերայ իմ գրել զգիրս Աւետարանիս, և ես յանձն առա.....)»³⁹: Շարունակության մեջ ասվում է, որ հանձնառու պատվիրատու պարոն Թորոսը խոջայական գերդաստանից է՝ ամդեցի խոջա Մադսուտի ազգականը: Փաստորեն, Հովհաննէս Չնքուշեցի վարդապետը՝ պարոն Թորոսի քեռորդին, խոջա Մադսուտի եղբոր՝ Հովասափի թոռն է: Իսկ խոջա Մադսուտը Էջմիածնի հայրապետական աթոռի դեմ Սահակի դավադրությունը կանխող Տիգրանակերտի համաժողովի (1630 թ.) գլխավոր մասնակիցներից է⁴⁰:

Այս հիշատակարանը նաև Հովհաննէս վարդապետի համբավի և երկու կենտրոնների փոխգործակցության մասին վկայող մեկ օրինակ է, ըստ որի՝ «...եկն Շնքուշայ տէր Յովհաննէս աստուածաբան վարդապետն ի քաղաքս Համիթ (1635-1637 թթ - Մ. Ա.) և նստեալ ի Ս. Մարգիս յեկեղեցին դաս ասելով, և լուսաւորելով զբազումս աստուածիմաստ վարդապետութեամբն իւրով»⁴¹: Մինաս ծաղկողը Հովհաննէս Չնքուշեցու հետ հիշատակում է նաև Չնքուշի մի շարք հոգևորականների անուններ, որը խոսում է վանական կյանքի աշխուժության մասին⁴²:

Ստացողի՝ Հովհաննէս Չնքուշեցու հիշատակարանը մանրամասն պատմում է գրչության ավարտից հետո Մինաս գրչապետի հիվանդանալու և մահվան մասին: Իսկ հետագայի հիշատակարանում մասնավորապես ասվում է. «...եւ շնքուշցի Մարգիսս և այլք ոմանք ընդ իս, վասն պակասութեան մերոյ եկեղեցւոյն: Որ ի մէջ սովու և հարկապահանջութեան գոլով բերաք զայս Բ Աւետարանքս ի Յամիթ, և սուրբան մէզատն ծախեցաք զոսա. ԿԵ (65) դուռուշ: Եւ գնօղք եղէն սուրբ Մարգսայ եկեղեցւոյ երեսփոխան խոճայ Մարգիսն և այլ տովլաթաւորք վասն եկեղեցւոյն իւրեանց, ի թվին ՌՃԼԸ (1689)»⁴³: Շարունակության մեջ հայտնի է դառնում, որ

³⁹ Նույն տեղում, էջ 187:

⁴⁰ Առաքել Դարբիժեցի, Գիրք Պատմութեանց, Ե., 1990, էջ 202-207, տե՛ս նաև Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 2798-2801: Խոջա Մադսուտը պատվիրատուն է Մ1767, Վ198 ձեռագրերի, տե՛ս Մայր ցուցակ Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, էջ 1129-1132 (Մ1767), Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 831-834 (Վ198):

⁴¹ Tisserant E., նշվ. աշխ., էջ 185-192 (BAV85):

⁴² Մեսրոպ, տէր Թորոս, միաբաններ՝ մեծ տէր Խաչատուր, փոքր տէր Խաչա-տուր, տէր Գիրակոս, տէր Յովհաննէս, տէր Մարկոս (Tisserant E., նշվ. աշխ., էջ 188): Նշված անուններով կարելի է կոախումներ անել, քանի որ հետագայում Չնքուշից այս անուններով եկեղեցական գործիչներ են հայտնի, սակայն այս դեպքում զերծ ենք մնում ենթադրություններից:

⁴³ Նույն տեղում, էջ 185-192:

վաճառքից մեկ տարի անց Ավետարանը վերագնվում է, և դրվում Չնքուշի Ս. Կարապետ եկեղեցում Ամիդի առաջնորդ Իսահակ վարդապետի այն պայմանով, որ այլևս դուրս չպետք է հանվի եկեղեցուց:

Փաստորեն, ձեռագրի գրչության ժամանակի և հետագայի հիշատակարանները հակակշռում են իրար. ի տարբերություն ձեռագիրը պատվիրելու ժամանակի հոգևոր հաստատությունը դարավերջին վատթար վիճակում էր հայտնվել:

Ամիդի կենտրոնին չնքուշեցի վարդապետների պարբերական պատվերներից ենթադրում ենք, որ առաջին՝ «Համառոտ Աստվածաշունչ» ձեռագրի գրչության վայրը նույնպես Ամիդն է:

4. Աւետարան (Ե2347)-1652 թ.: Տեղ՝ Ամիդ: Գրիչ՝ Խաչատուր: Ստացող՝ Մալի-ճան⁴⁴:

Գրչի հիշատակարանում Միջագետքի առաջնորդի անունը հիշատակելուց բացի՝ նշվում է նաև «գարբազան դիտապետն զտէր Մարկոս հայրապետն եւ աստուածաբան վարդապետն», որից հետո ասվում է ձեռագիրը Ս. Աստվածածին «եկեղեցում» դրվելու մասին: Ժամանակաշրջանը համընկնում է Մարկոս Չնքուշեցու պաշտոնավարման (1643-1679) և եկեղեցական աստիճանի հետ: Նշենք, որ այդ շրջանում նույնանուն այլ վարդապետ հայտնի չէ⁴⁵: Հետևաբար կարծում ենք, որ խոսքը Միրա-հայաց Ս. Աստվածածնի մասին է:

5. Աղոթամատույց (Մ42) -1677 թ.: Տեղ՝ անհայտ: Գրիչ՝ Թումա երեց: Ստացող՝ Մարկոս վարդապետ⁴⁶:

Աղոթամատույցի ստացողը աստվածաբանության վարդապետ Մարկոսն է: Նախորդ ձեռագրի օրինակով՝ ենթադրվում է, որ պատիրատուն Չնքուշի Մարկոս վարդապետն է: Իսկ գրչության տեղայնացման համար նշված հիմնավորումներին գումարվում է գրչի անունը (տե՛ս ստորև):

6. Ժողովածոյ (Մ2038)-1674 թ.: Տեղ՝ Ամիդ: Գրիչ՝ Թումա: Ստացող՝ Մինաս Ամթեցի (Չնքուշի վանահայր՝ 1679-1703)⁴⁷:

7. Պատմագիրք Հայոց (Մ1482)-1678 թ.: Տեղ՝ Ալիփուղար գիւղ (Ամիդի արվարձանային գյուղերից է⁴⁸): Գրիչ՝ Գրիգոր, Թումա: Ստացող՝ Մինաս վարդապետ⁴⁹:

⁴⁴ Պողարեան Ն., նշվ. աշխ., հ. 7, Երուսաղեմ, 1974, էջ 478-9 (Ե2347):

⁴⁵ Հմմտ. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Ե., 1946, էջ 267: Այստեղ նշված, Մարկոս Շնքուշին, հավանաբար, Մարկոս Չնքուշեցին է: Կարծում ենք, որ ազգանուն-տեղանունը սխալագրություն է:

⁴⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Ե., 1984, էջ 155-160 (Մ42):

⁴⁷ Նույն տեղում, հ. Զ, Ե., 2012, էջ 1153-4 (Մ2038):

⁴⁸ Տե՛ս Էփրեյան Ս., Պատկերագրող բանաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1902, էջ 49:

⁴⁹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, 2008, էջ 1381-1392 (Մ1482):

Մատենագիր, եկեղեցական մի շարք պաշտոններ զբաղեցրած Մինաս վարդապետը տարբեր գրչակենտրոնների (հատկապես Եվդոկիայի⁵⁰) պատվերներ է տվել, որոնց մեջ կա նաև Ամիդը: Ձեռագրերի հիշատակարանները հարուստ չեն տեղեկատվությամբ, սակայն, ինչպես նկատեցինք, այս երկու ձեռագրերի և Մ42 Աղոթամատույցի գրիչների անունները նույնանում են: Այդ փաստը ենթադրել է տալիս, որ վերջինիս գրչության վայրը Ամիդն է: Այս ենթադրության համար հավելյալ փաստարկ է գրելաձևի և ուղղագրության համեմատությունը:

Այսպիսով, հիշատակարանային տվյալների համադրումով փորձ արվեց ամբողջացնել Չնքուշի ձեռագրական ժառանգությունը: Այն Չնքուշի և առհասարակ Հայոց Միջագետքի հոգևոր-մշակութային կյանքի (XVI դարի վերջին քառորդից մինչև XVII դարավերջ) մի կողմն է ներկայացնում, որի ուսումնասիրությամբ հնարավոր եղավ էական ճշգրտումներ կատարել նյութի շրջանակում:

Չնքուշի գրչության պատմությունը մեծ չէ և արժևորվում է միայն Գասպար գրչի գործերով: Մա կարող էր պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Ամենահավանական վարկածն այն է, որ առավելապես կարևորվել է վարդապետական կրթությունը, իսկ գրչությունը երկրորդ պլան է մղվել: Նույն երևույթին հանդիպում ենք նաև Բաղեշի դպրոցի պարագայում, երբ Բաղեշը XVII դարում տվեց վարդապետների մի ամբողջ շարք, սակայն գրչության տեսանկյունից բավական համեստ է⁵¹:

Գասպար գրչի օրինակած ձեռագրերի հիշատակարանների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նա՝

- Հեղինակավոր գրիչ էր, որի վկայությունն է ձեռագրերի պատվիրատուներ ունենալը, այդ թվում՝ եպիսկոպոսական, ինչպես նաև նրա վկայությունը աշակերտներ ունենալու վերաբերյալ,

- Գրիգոր Դարանաղցու երկում նշված Պետրոս Կարկառեցու աշակերտը «Չնքուշեցի Գասպար վարդապետն» է:

Չնքուշ-Կարկառ փոխառնչությունների օրինակներ են Չնքուշի գրչության մարումը, վարդապետների՝ Ամիդի դպրոցին արած պարբերական պատվերները և դրանց հիշատակարանային տվյալները: Այս ամենից կարելի է ենթադրել, որ՝

- Չնքուշը սերտորեն կապված էր եպիսկոպոսանիստ Ամիդ հետ,

⁵⁰ Մինաս Համդեցու մասին տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 344: Մինաս վարդապետի հիմնական պատվերներ կատարողներն են եղել եվդոկացի Միքայել գրիչ-ծաղկողը և Մկրտում Զուղայեցի գրչը (Մ1149, Մ1370, Մ1483, Վ1100, Վ911):

⁵¹ Տե՛ս Ալիսեան Ն., Բաղեշի դպրոցը:

- Չնքուշի հոգևոր դասը բարեկեցիկ պայմաններ ուներ, քանի որ նրանց տված պատվերներից շատերը նկարագարող ձեռագրեր են, և անգամ Բորգյան հավաքածուի Ավետարանը մեկենասի միջոցով է նվիրաբերվել Միրահայաց Սուրբ Աստվածածին վանքին:

ПИСЬМЕННОЕ НАСЛЕДИЕ ЧНКУША

САРГСЯН А. Ю.

Резюме

Селение Чнкуш находилось в Армянской Месопотамии и являлось как духовным, так и культурным центром. В с. Чнкуш действовала духовная семинария. Воспитанники семинарии содействовали развитию армянской письменности, от руки переписывая и передавая будущим поколениям духовную литературу, в частности, Евангелие. Среди этих писцов прославился писец Гаспар, являвшийся учеником Петроса Каркареци и известный как “Архимандрит Гаспар Чнкушеци”, упомянутый Григором Даранакци. Со временем чнкушские архимандриты стали заказчиками рукописного центра г. Амид в Армянской Месопотамии.

MANUSCRIPT HERITAGE OF CHNQUSH

A. SARGSYAN

Abstract

Town Chnqush was located in Armenian Mesopotamia and was known both as spiritual and cultural center. A spiritual seminary operated in Chnqush. Pupils of the seminary contributed to the development of the Armenian literature. They studied spiritual literature and in particular, the manuscripts copying from hand to hand to future generations. Gaspar who was Petros Karkaretsi's pupil was well known among scribes. Grigor Daranaktsi also mentioned him as “Archimandrid Gaspar Chnqushetsi”. Later chnkushian archimandrites became customers of Amid's scriptorium in Armenian Mesopotamia.